— Հէնց այդ էֆենդի աղաներն էին կտրել տոողները, որովհետեւ նրանց գլխաւորները կապալով յանձն էին առել շէնքը կառուցանելու: Իսկ սրբազան առաջնորդը նրանց բարեկամն է...

— Հիմա ի՞նչ էք կարծում, ո՞վ է մեղաւորը:

— Ի հարկէ, մերոնք, մեր ժողովրդի ներկայացուցիչները, որ աւելի վնասակար են, քան թէ թուրքը ու քուրդը:

Ասլանը եւ վարպետը դեռ երկար խօսում էին: Ես արդէն սկսել էի ձանձրանալ. եթէ չամաչէի՝ կը պառկէի ու կը քնէի: Աչքերս դժուարութեամբ էին բացւում, գլուխս այնքան ծանրացել էր, կարծես արճիճով լցուած լինէր: Ի՞նչ մի առանձին բաւականութիւն են գտնում այդ տեսակ վիճաբանութիւնների մէջ, մտածում էի ես, միշտ միեւոյն խօսքերը, միշտ միեւնոյն դատողութիւնները. մէկը հարստահարուած է, միւսը հարստահարող է, մէկը հալածուած է, միւսը հալածող է, ի՞նչ պէտք է անել, որ նեղեալների դրութիւնն աւելի բարւոքի, ինչպէ՞ս պէտք է թեթեւացնել ճնշուածների ծանր բեռը եւ այլեւ: Կարծես դրանք այն մեծ աստուածորդու աշակերտները լինէին, որ հրաւէր կարդաց նեղուած մարդկութեան՝ ասելով, «եկա՛յք առ իս ամենայն նեղեալք եւ ծանրաբեռնեալք, եւ ես հանգուցից զձեզ»:

Ընթրիքի սեղանը վերջապէս աղատեց ինձ նրանց խօսակցութիւններից. վիճաբանութեան թելը ընդհատուեցաւ: Վարպետի տան սպասաւորները նրա գործարանի աշակերտներն էին: Ներս մտան մի խումբ զանազան հասակի պատանիներ, իւրաքանչիւրը ձեռքում մի բան բերելով. մէկը աղ, միւսը հաց, երրորդը գինի, չորրորդը կերակուրներ, մի խօսքով, ինչ որ պատրաստուած էր, բոլորը միանգամից դրուեցաւ սեղանի վրայ: Նրանց տեսնելով, ես բոլորովին սթափուեցայ, այլեւս չէի նիրհում, մանաւանդ երբ նկատեցի, որ այդ չարաճճիները մի առանձին հեգնութեամբ էին նայում իմ վրայ: Մէկը նրանցից մինչեւ անգամ դիտմամբ կոխեց իմ ոտքը: Բայց ես աւելի պատճառներ անէի նրանց վրայ ծիծաղելու: Բոլորի ձեռքերը, սկսած մատներից մինչեւ արմունկները, կապոյտ գոյն ունէին, կապոյտ գոյնով ներկուած էին եւ նրանց երեսներն ու քթերը: Հեշտ բան չէր ներկարարի աշակերտ լինել եւ չթաթախուել ներկերի մէջ: Բայց ե՞ս... ե՞ս ում աշակերտն էի... իմ ձեռքերն ի՞նչ գոյնով պիտի ներկուէին... Այդ հարցերը իմ գլխում ծագելու ժամանակ ես ամբողջ մարմնով դողում էի...

Ընթրիքից յետոյ ես խնդրեցի վարպետից, որ ինձ մի տեղ ցոյց տային քնելու: Նա իսկոյն հրամայեց աշակերտներից մէկին, եւ նա ինձ համար անկողին պատրաստեց միեւնոյն սենեակում, ուր մեզ ընդունել էին: Տնային բարեկեցութեան գլխաւոր յատկանիշներից մէկը երեւում է անկողնի մաքրու-